

Պիր ընկալեթէ կէօրէ , սաթըւան ապատիյէ վէ էմխար իշինտէ , Մուսթաֆա

ՆԻԿՈՂՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

... Խմբագիր .
Գուցէ՛ք դասաւարտես դու զիս մինչեւ հիմա Նիկողոս եպիսկոպոսի նկատմամբ լը-
սութիւն պահելուս համար :

Իրաւունք ունիս , բարեկամ , մանաւանդ թէ կը հաւանիմ ալ , բայց ըսէ խնդրեմ , մի-
թէ մեր մէջ այնչափ զօրաւոր է հասարա-
կաց կարծիք ըսուած զօրութիւնը միթէ Պատ-
րիարքանի վարչութիւնն իր ըրած ամեն մէկ
որոշումները հասարակաց կարծիքին համա-
ձայն կը տնօրինէ . միթէ ամեն տնօրինում
հասարակաց ատենանին կը ներկայէ անխորի ,
միթէ մանաւանդ եկեղեցականի մը կողմէ
հասարակաց իրաւունքի դէմ եղած ապօրի-
նաւորութիւնը ըստ եկեղեցական օրինի՝ հ-
թէ յանցանքը կրօնական է , արդարապէս
կը պատժէ՞ . միթէ . . . միթէ . . . միթէ . . .
եւ այս ամենուն վրայ աւելցուի նաեւ միթէ
հասարակաց կողմէ մատուցուած ամեն բո-
ղոքի մասնաւոր ուշադրութիւն կը մատու-
ցա՞նէ :

Զկարծուի թէ այս կէտերը լոկ ամբաս-
տանութիւններ են . քաւ լիցի մեզ վայրկեան
մ'անգամ ամպարչտանալ առանց կարեւոր
ապացոյցներու խօսելով՝ հասարակաց միտ-
քերը դայթակղել եւ կամ ազգային իշխա-
նութիւնը վատահամբաւել . այս չէ մեր բուն
վախճանն ու նպատակը , այլ հասարակաց
իրաւունքի դէմ եղած որ եւ է բռնաբարում
մը հասարակաց ատենանն ներկայելով՝ ձե-
ռքնհաս իշխանութեան ուշադրութիւնը հը-
րաւերել անոր վրայ :

Առարկենք ուրեմն անաչառապէս :
Ամեն երկիր՝ ամեն ժողովուրդ ու ամեն
ազգ , որու կառավարութեան նկարագիրը
սահմանադրական է , հոն կառավարութեան
պարտքն է հասարակաց կարծիքն յարգել , իր
ընթացքը անոր կարծեացն համաձայն ուղ-
ղել եւ առանց հասարակաց հաւանութեանն
օրինաց փոփոխութիւնը չտրամադրել . ասանկ
կը տնօրինէր նաեւ 1865 մարտ 27 ի բարձ-
րագոյն կամօք հաստատուած ազգային սահ-
մանադրութիւնն ալ :

Սակայն 1866 մարտ 27 ի պատահաւր՝ որ
հասարակաց հաւանութեանը դէմ գործուած
իրութիւն մ'է , կը հաստատէր թէ հասարա-
կաց կարծիք ըսուած զօրութիւնը մեծ նը-
շանակութիւն մը չ'ունի Պատրիարքարանի
առջեւ :

Թէպէտ ստոյգ է թէ 1865 ի սահմանադ-
րութիւնը կառարելութեան նկարագիր չու-
նէր , թէպէտ չատ անսակ թերութեանց են-
թակայ էր , թէպէտ փոփոխութիւններու կը
կարօտէր , եւ թէպէտ գործադրութեան գրծ-
ուար պարագանէր ունէր իր մէջ , օակայն
անոր գործադրութիւնը ժամանակի մը հա-
մար է , վերաքննութեան ենթակայ էր եւ
այս վերաքննութիւնն ալ փորձառութեան կը
կարօտէր , զոր ժամանակն ու դէպքերը պի-
տի ազդէին :

Օրէնք մը որ հասարակաց հաւանութեան
կնիքը կը կրէ իր վրայ , որչափ ալ թերու-
թեան ենթակայ ըլլար , դարձեալ չկրնայ որ
եւ է որ առանց պայմանեալ ժամանակը լը-
րանալուն եւ հասարակաց հաւանութեանը

անոր վերանորոգումը փութացնել , եթէ ոչ
օրինաց ոյժը կը տկարի եւ հակառակորդ
մասին ընդդիմախօսութեան փաստը կաւել-
նայ :

Թէութեամբ մը քաղաքական կամ ազ-
գային օսահմանադրութեան կը նմանի , եկե-
ղեցական սահմանադրութիւնն ալ :

Եթէ առաջինը՝ որու արդարապէս գոր-
ծադրութեամբը կը յարատեւի եւ ընդունելի
կըլլայ առհասարակ ամենուն . երկրորդն ալ
իւր օրէնք՝ նոյն տրամադրութեան ենթակայ
է առանց մասնաւոր բացառութեան :

Առաջինը միայն սա թէութեամբ երկրոր-
դէն կը տարբերի , որ պայմանեալ ժամանա-
կի մը համար գործադրելի ըլլալով՝ նաեւ
վերաքննութեան ալ ենթակայ է . իսկ երկ-
րորդը՝ որու համար պայմանեալ ժամանակ
մը չ'ունակուած ըլլալուն ընդհանուր գեղծ-
մանց եւ ժամանակի ստիպմամբը վերաքն-
նութեան եւ հետեւապէս կատարելութեան
կենթարկի , ինչպէս նաեւ գերբնական օրէն-
քնն ալ , որ ատեն մը չարի դէմ չար ընել
կը տրամադրէր , իսկ հիմա չարեաց դէման-
գամ բարիք ընել կը պատուիրէ :

Ահա այսպէս ամեն օրէնք ժամանակին
փոփոխութեամբն ու մարդերու խառնու-
ծոցը համեմատ նոր նոր շրջաններ ընելով՝
հետզհետէ կատարելութեան նկարագիրը կը օ-
տանայ :

Հոս մէկ ուրիշ պարագայ մը կայ , որ մեր
տեսութեան ամենէն բարձր կէտն է . այ-
սինքն թէ՛ հասարակաց բարոյականութիւնը
ընդ միշտ երաշխաւորող եւ օրէնքն հանրու-
թեան պարտաւորիչ ընող զօրութիւնը օրի-
նաց արդարապէս գործադրութիւնն է , թէ
անոր անուանական գոյութիւնը կամատու-
րը :

Օրէնք մը՝ որու տրամադրութիւնը փո-
խանակ իշխելու առհասարակ՝ մասնաւորնե-
րու կամքը եւ եթ կ'իշխեն , եւ նա բացառիկ
պարագաներու համար միայն կը գործադրի ,
բնականաբար անոր ոյժը կը տկարի , հասա-
րակաց բարոյականութիւնը երաշխաւորող
տրամադրութիւն մ'ըլլալէ կը դադրի , եւ
հանրութեան պարտաւորիչ չ'ըլլալէ զատ՝
նաեւ վարչական դրութիւնն ալ երթալով
կ'եղծանի եւ անիշխանութեան կնիքը կը ս-
տանայ օրէնքին ոչ հեռաւորութեամբը :

Ասանկ պարագայի մէջ բնականաբար
գեղծումները կ'առաւելուն , զանգատները
կը բազմանան , հասարակաց ձայնը կը բարձ-
րանայ եւ գեղծումներու բարձման պէտքը
կ'զգացուի ստիպողաբար , զոր կը նշակէր
նաեւ Մատիս լրագրոյ պատուարման խմբա-
գիրն ալ իր 776 թուովը , որուն համար մեր
չնորհակալիքը կը մասուցանենք հրապա-
րակաւ :

Բարեկարգութեան վերանորոգումը ու
մանց համար՝ որոց ինչ տեսակ օկզբունքի
ծառայելը գիտենք , թէպէտ անմարտելի ,
բայց ազգին այժմու գրիցն ու փնտրելին նը-
կատմամբ այնչափ հարկաւոր ու ստիպողա-
կան է , որչափ օտոյգ ու ճշմարիտ է թէ
քրիստոնէութիւնն անբիծ ու անարատ է :

Հոս այն ինչ տեղ եկեղեցական մը քա-
ղաքականապէս կ'ամբաստանէ ուրիշ եկե-

ղեցական մը ու անպատիժ կը մնայ եւ յան-
ցաւորութիւնը կը քաջալերի :

Այլուր առաջնորդի մը ապօրինաւոր ու
գայթակղելի ընթացիցը դէմ հանրութեան
կողմէ հրապարակական բողոք կը բարձուի ,
եւ ձեռնհաս իշխանութեանն ուշադրութիւն
չ'մատուցուիր , եւ ահա ապօրինաւորութիւ-
նը յայտնապէս կը յառաջադիմէ :

Հոս այս ինչ եկեղեցականը հրաշքներ
գործելով՝ յանուն այն ինչ տեղի ժողովրդ-
եան հառարակութեանն ստակ կը հաւաքէ
եւ հանրութեան մօրուքին ինչալով՝ կծիկը
կը դնէ : Ժողովուրդը կը բողոքէ , վարչու-
թիւնը Պօլիս կը հրաւիրէ զայն , եւ դարձ-
նալի հրաշիւք մ'արդարանալով՝ ընդարձակ
փնտրելի մը առաջնորդ կ'անուանի եւ « առօք
փառօք » իր տեղը կը դառնայ :

Ուրիշ տեղ մը մէկ քանի վարդապետներով
նոյն իսկ վարչութեան դէմ ապստամբական
խլրտումներ կ'երեւին . հոս ոմանք կը զայ-
րանան , անոնց պատժուիլը կը պահանջեն ,
եւ անոնք անդին վարչութեան որոշումները
կը ծագեն :

Այլուստէք բարձրատիճան եկեղեցակա-
նի մը նկատմամբ մարդասպանութեան ամ-
բաստանութիւն կ'ըլլայ . երկու անստոյգ
յայտագիր կը հրատարակի կասկածելի քըն-
նիչներու կողմէ , տարիներ կ'անցնին եւ ամ-
բաստանեայն իր տեղը հանգիստ մնալով
զօրաւոր կուսակցութիւններ կը կազմէ :

Հոս վերստին բարձրաստիճան եկեղեցա-
կան մը Մանգումէն Շանլումէի տառափու-
խելով՝ ամբողջ հասարակութիւն մը կ'ան-
պատուէ ի ներկայութեան Ա . Պատրիարքի
եւ խառն ժողովոյ :

Ժողովուրդը կը լսէ զայս , կը զայրանայ
եւ ակնդէտ կ'օպասէ իրեն դէմ եղած այս
նախատանաց վրէժը , բայց Ե . Ն . . . ին
յանդգնութիւնը անվարձ կը մնայ , որովհե-
տեւ « եկեղեցական է » :

Երկար կ'ըլլայ առնոց նման , իրականա-
ւոր կութիւնները թուել , զոր պատմութեան
յանձնելով՝ կը դառնանք ըսելու թէ Նիկո-
ղոս եպիսկոպոսի ինքնակոչ կաթօղիկոսու-
թիւնն ալ ժամանակիս զեղծմանց մէկ ար-
գիւնքն է :

Բաւական է որ մէկը եկեղեցական ըլլայ
վեղար եւ փրկոն զգենու , եւ ահա անմի-
ջապէս կարգարանայ ինչ եւ է ամբաստա-
նութեան ալ ենթակայ ըլլայ :

Ամեն վճիռ , ամեն դատաւարութիւն
եւ ամեն պատիժ միայն եւ եթ աշխարհա-
կաններու ենթարկի , եւ ահա եկեղեցականու-
իւնն ազատ համարձակ իր ամեն ուղածն ը-
նէ ազատաբար :

Այս անարդարութիւնը յանկրօնութիւն
կը տրամադրէ զժողովուրդը եւ եկեղեցակա-
նութիւնը երթալով յանցանքի ու ոճրագոր-
ծութեան ազատատանարան ըլլայ , քան եթէ
հովուական պաշտօնատարութիւն :

Իմ մասնաւոր կարծիքս այն է թէ յանցա-
ւորութիւնը մէկ կողմէ պատժելու եւ միւր
կողմէ ալ գեղծումներու իսպառ առաջըն
առնելու համար վերանորոգութիւնը հարկա-
ւորապէս փութացնելու է :

Թէպէտ գիտէի թէ մեր այս յօդուածը

շատերու եւ ձեռնհաս իշխանութեան կողմէ թէ մասնաւոր ուշադրութեան չառնուիր եւ կամ թէ անոր ողին ու սկզբունքը կը դատաւարտուի, բայց բաւական է որ մեր պաշտած սկզբունքը ճշմարիտ հասարակաց օգտակար եւ ժամանակիւ պահանջման համաձայն ըլլայ:

Յօդուածոց նշանաբանը հասարակաց շահուն ու իրաւանց պաշտպանութիւնը եւ գեղծութիւն ու անբարեկարգութեան դէմ բողոքել է:

Ասոնց հետ կը բաղդենք նաեւ Նիկողոս եպիսկոպոսի ինքնակոչ կաթողիկոսութեանը դէմ եւ կը փափաքինք որ հասարակաց ձայնը որոշէ իր եկեղեցւոյ գլուխը, եւ ոչ Պատրիարքարանը՝ որուն համար կը կասկածինք թէ գուցէ Նիկողոսն ալ արդարացնելով՝ առօք փառօք զինքը վերստին կաթողիկոսական գահը բարձրացնէ:

Ասոնք թեպէտ ծանր են Պատրիարքարանի նկատմամբ, բայց ոչ ինչ նուազ հասարակաց գայթակղութեան արժանի է տեսնել բարձրաստիճան եկեղեցական մը՝ որ առանց յարգելու իր քարոզած կրօնին սկզբունքները, հասարակութեան մէկ անդամին՝ այսինքն Մանգուլի խմբագրին հետ՝ հակառակ իր կարգին ու կոչմանը քողաքական ատեանի առջեւ ի ներկայութեան հասարակաց դատի կը մտնէ:

Հոս սա ենթադրութիւնը կը ծագի թէ կամ մեր եկեղեցականներն իրենց քարոզածին իրենք չեն հաւատար, կամ հասարակութիւնը խուլ ու կոյր կենթադրեն, կամ իրենց քարոզածին միտքն ու ոգին չեն ըմբռներ: Կամ հասարակութեան ծուռ ու սխալ մեկնելով՝ իրենք իրենց ուզած կողմը կը քաշեն եւ կամ իրենց քարոզածին հետ նաեւ հասարակութիւնն ալ առ ոչ ինչ կը գրեն:

Այս ենթադրութեանց բացատրութիւնը կը պահանջուի վարչութեան խառն ժողովէն եւ մասնաւորապէս Ս. Պատրիարքէն, որոց այս տեսակ գայթակղելի իրաց նկատմամբ բռնած անտարբերութիւնը հասարակաց զայրացումը կը գրգռէ:

Ահա, . . . խմբագիր, այս կէտերուն համար լուծիւն կը պահէի նաեւ Նիկողոս եպիսկոպոսի նկատմամբ, զոր հրատարակելով ցարդ՝ հասարակաց ուշադրութեանը կը յանձնեմ:

1866 զեկ. 23

Սէֆ

Ի Լ Ա Ն Ա Յ

Ֆրանսիաց լիսանընա վէ թիւրքճէյէ լաերդըլա աշինա օլտուգտան պաշգա, կէրէք թէրճէմէ վէ կէրէք թէէլիթաթ իլէ Մանգուլմէմիզէ եարտըմ իթմէկէ միւգթէտիր պիր մուաւիլնէ իհթիեաճըմըզ պուլունտուղունտան, շու խըտմէթէ գապիլիէթի վէ իսթէյի պուլունտանըն պիլիմ իլէ կէլիպ կէօրիւլմէլէրինի տաւէթ իտէրիգ:

Իսթանպուլտա Հասրըճըլար իլինտէ, Ուղունճա-օվա սօդաղընտա 11 իիւ

մերօ իլէ միւրազգամ տէվայիրի ալիլէ թահմիսխանէսի չէնտ մահտան պերուքիւշատ օլունարագ, ալեա տիպէք գահվէսի ֆիրուխթ օլունմագտա խէտէ, թահմիսխանէնին եէրի պիրուգ սաբա օլունպ, վէ հէր քէս իլին ուղումագըլղա գօլպ օլան պիր մահէլտէ տաթի մէգքիւր գահվէտէն պուլունտուլունմագտա արգու օլունտուղունտան, իսթանպուլթարաֆընտան քէօրիւ պաշընտա, եէնի աշըլան շէքէրլամէճի տիւքքեանընտա տաթի մէգքիւր ալեա տիպէք գահվէսինտէն սաթըլմագտա տըր:

Պատիւ կը համարիմ ձեր հաշակաւոր Մանգուլի լրագրոյն միջոցաւ ծանուցանել Արգոյ հասարակութեան եւ դատաւարաց որ կաղանդի պարգեւաբաշխութեան վերաբերեալ ամէն տեսակ ոսկեզօծեալ գրքոյկներ եւ օրացոյցներ, նա եւ տեսակ տեսակ պատկերներ խիստ աման գիններով, մեր քով վաճառուիլ սկսած է. ուստի ամէն անոնք որք կուզեն ընդունիլ, պէտք է յաճախել Մահմուտ-բաշան Յովսէփ գրաւաճառ Գաւաֆեանի գրատունը ի թիւ 157:

ՊԵՅՕՂԼՈՒ ԶԱՏՏԵՍԻՆՏԷ
ԷՐՄԵՆԻ ԹԷԱԹՐՕՍՈՒ ԵԱՆԸՆՏԱ
Ն Ի Ի Մ Է Ր Օ 190

Պու տէֆա եէնիտէն քիւշատ օլան մէգքիւր շէքէրճի տիւքքեանըն իւսթգաթընտա օլան պիւլիւք սալօնտէնտա, պուլունտան պէօլլէ էթ քէսիմինին նիհայէթիլնէ գատար, հաֆթատա իւշ տէֆա օլարագ, եանիյա, բէնչչէմպիհ, ծիւմա իրթէսի վէ բազար ախշամլարը սաաթ 11-3 լատտէլէրինտէ՝ պաշլանարագ, ինճէ սազ իւանէնտէ ուսթա Գրիգոր ճիկէլճիլեան գումբանեաւթ թէքմիլ օլարագ, էնվայի չէրէզ վէ հէր պիր տիւրիւ իշէթէհվէն ֆիաթլար ըլա օլունղու, վէ պուլունղուպ կէլէն գաթլարըն խօշնուտ օլաճագլարընա հիշ շիւքհէմիզ օլմաաղը հալտէ իշ պու իլանէ իպթիտար գըլընտը:

Ի Լ Ա Ն
Ղայէթ հիւնէրի սուրէթտէ վէ էհվէն ֆիաթլա տեազ օեռնու մէշք իթմէք իսթէյէն ֆաթիլեալարըն նա ում թէաթրօսու գարշըրնտա Լիւքսէմպուրի նամ գաղինօտա միւսիւ ֆրանսօսեա միւրաճաաթ իլլէմէլէրի իլան օլունտուր:

ԷՄԹԱԱՅԸ ՏԱԽԷԼԻՑՑԷ			
	օգգաւոր	ՊՐԶԻՐ	ՊՐԶԻՐ
Մահմուդիյէ	110-		
Աֆիօն բրիմօ	220-		
Մազը սիյահ	15-20	14	
Մազը ապլապ	8-	9-	
Եաբաղը Անաթօլու քիլիլի	6-20		
Եաբաղը » Երզնամըշ	15-	14-	
Ճէհրի բրիմօ	12-20	15-	
Քիթրէ բրիմօ եաբաղ	21-	25-	
Բամուզ Ատանա	111-2	12-	
» կէյվէ պիրինճի	121-3	15-	
» Խաբուլթ	11-		
» Աճէմ Բուսիւ	11-		
Քէօթայիւ	15-		
Թիֆթիք վան	25-	26-	
Թիֆթիք էնգարէ բրիմօ	45-	44-	
Անիսօն Անաթօլու	5-		
» Բումէլի	4-		
» Սագըզ	7-30		
Պալ մումու	24-	25-	
Սալէպ	14-	15-	
Մահլէպ	7-		
Գօլուն տէրիսի բրիմօ	6-20		
Քէլի » Թիլլիլ »	10-	11-10	
Գօլուն տէրիսի իքինճի	5-20		
Պիրինճի գօղա գուրու	160-		
Իքինճի » »	155-		
Յիւսթիւր պիրինճի	500-	550-	
Տէմիրտաշ շէքի	500-		
Կիւրճի իրէյի Օլգա	500-		
» » Գարապաղ	250-		
» » Նօաիլի	550-		
Թայղան քիլէ	58-	40-	
» Տուրօ Բումէլի	25-		
Գըզըմա թուլա	50-		
» Բումէլի	20-		
Իմմայիլ	58-	59-	
Արփա Իպրայիլ	12-	14-	
Արփա Բումէլի	14-		
Գօգօրօզ	18-		
Եաշ գօղա	15-10	14-10	

ԷՄԹԱԱՅԸ ԷՃՆԷՊԻՑԷ			
	օգգաւոր	ՊՐԶԻՐ	ՊՐԶԻՐ
Գահվէ պիրինճի 100	1100-20		
» Իքինճի »	850-	900-	
» Իւլիւնճիւ »	800-20		
Թօզ շէքէր Յիւսթը 14	252-	267-	
Շէքէր Հօլանտա »	254-	270-	
Գալալ »	660-	650-	
Չէլիք Իքի 00 »	175-	180-	
Չէլիք պիր 0 »	190-		
Թիմուր, չըպուզ հասըր եուվարուզ »	68-	70-	
Թիմուր եարմա չիւ »			
Վիլիք » »	75-	76-	
Սաճ Նիւմէլի պիրտէն 114 գատար »	115-	120-	
Թէլ չէմպէր »	90-	92-	
Մօր պաղամ »	60-	65-	
Չաճք գըզըրըզ »	47-	48-	
Շապ ինկիլիզ »	70-		
Կէօզ Թաշը »	5-20	6-	
Չիվիլ »	125-	150-	
Գըրմըզ շարապաթ »	64-	65-	
Գըրմըզ քիթէճիթ »	42-	45-	
Պիպէր »	5-20		
Նըշաաթըր »	61-4		
Թէնէքէ խաշ մարգա չիֆթէ սանաթ »	540-	550-	
Բօմ ինկիլիզ կալօն »	11-	12-	
Բօմ Ամէրիդա »	9-		

ՍԱՀԻՊ ՂԱԶԷԹԱ
ԿԱՐԱՊԵՏ Յ. ՓԱՆՈՅԵԱՆ
ԼԷՎԱՆՔ ՀԷԲԱԼՑԸՆ ԹԱՊԵԱՆԷՍԻՆՏԷ
ՊԵՅՕՂԼՈՒՑԱ ՏՕԼՈՒ ԵՕԼՑԱ, ՅՕԹՕՐԱՅ ԱԳՏՈՒԼԷ
ՊԻՐՏԵՐԼԷՐ ԳԱՐԵՐԸՆՑԱ ՆՈՒՄԵՐՈ 467: